ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 07>> << փետրվար >> 2017 թ N 29

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԼԵՎՈՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Լևոն Թադևոսյանի հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 7-ի N322 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2017 թվականի փետրվարի 7-ից ՀՀ <<Վայոց ձորի մարզի Եղեգիսի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լևոն Թադևոսյանին ազատել զբաղեցրած պաշտոնից, լուծելով նրա հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 7-ի N322 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը, կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձման-ընդունման աշխատանքները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ